1 Stü Schlatter, Geschichte der Basler Mission, 95–119; Ehret, Die Anfänge der Basler Mission in Russland; Katterfeld, Felician von Zarembo, 30–39; Manoukian, Zeugen der Menschlichkeit, 119–120:

2 Նոյնը:

3 Stü Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1822), 447–448; Katterfeld, Felician von Zarembo, 60; Pangel, Licht im Osten, 10–14; Gazer, Studien zum kirchlichen Schulwesen, 78; Լէօ, Պատմութիւն Դարաբարդի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 87; Օրմանեան, Ազգապատում, 3724; Կարապետյան, Շուշի Բերդաքաղաքը, 146:

4 ԺԹ դարու առաջին քառորդին 1817 թ. սկսեալ, մասնաւորաբար Պերմանիոյ վիւրթեմպերկ (Württemberg) նահանգէն կամ Շուսալիայէն (Schwaben) կրօնական համոզումներէ մղուած արտագաղթողներ, այլ խօսքով՝ զաղութարարներ, հաստատուած էին այդ շրջաններուն մէջ: Անոնք այնտեղ հետզհետէ հիմնած էին Alexanderdorf, Alexanderhilf, Annenfeld, Neu-Tiflis, Waldheim, Blumenthal, Katharinenfeld, Traubenberg, Eigenfeld, Georgsfeld, Helenendorf, Petersdorf, Marienfeld և Freudenthal անուններով բնակավայրերը: Սյս մասին տես Gross, Missionare und Kolonisten; Haigis/Hummel, Schwäbische Spuren im Kaukasus; Gazer, Studien zum kirchlichen Schulwesen, 7; Pangel, Licht im Osten, 14–16; Կարապետյան, Շուշի Բերդաքաղաքը, 146; Manoukian, Zeugen der Menschlichkeit, 121–122:

գաղութներուն հոգևոր խնամքը, այնուամենայնիւ անոնք կը նախընտրեն նուիրուիլ իրենց իսկական կոչումին և շարունակել իրենց ճամբան՝ կովկասեան հեթանոս և մահմետական ժողովուրդներն ու ցեղախումբերը դարձի բերելու համար: Իրենց ճանապարհին՝ Լեռնային Արցախի մէջ ծանօթանալով Շուշի բերդաքաղաքին ունեցած աշխարհագրական կարևոր դիրքին, Ջարեմպա և Տիթրիխ կ'որոշեն միսիոնարական առաքելութեան կեդրոն դարձնել ուղղակի Շուշին՝ նկատելով, որ այդտեղէն շատ աւելի մատչելի պիտի ըլլայ գործունէութիւն ծաւալելու ոչ միայն անդրկովկասեան տարածաշրջաններուն մէջ, այլև Պարսկաստանի և Օսմ. կայսրութեան արևելեան շրջաններէն ներս:⁵

1824 թ. յունուարի սկիզբը, Ջարեմպա և Տիթրիխ բնակութիւն կը հաստատեն Շուշիի հայկական թաղամասին մէջ, ուր կը գնեն փոքրիկ տուն մը՝ իբրև քարոզչական ժամանակաւոր կեդրոն:⁶ Շուշիի հայերէն ջերմ ընդունելութիւն գտնելով՝ Ջարեմպա կը քաջալերուի հիմնելու ռուսերէն լեզուի դպրոց մը: Յանձին շուշեցի տարեց սարկաւազի մը՝ Գրիգոր Եթովպեանի որդւոյն Ասոնդի, որ նոյնպէս ձեռնադրուած սարկաւազ մըն էր և իր ուսումը ստացած էր ժամանակի նշանաւոր վարդապետներէն Յովսէփ Արցախեցիին՝⁷ քով, Ջարեմպա հայկական դպրոց մը հիմնելու իր ապագայ ծրագրին համար կը գտնէ այն խոստմնալից երիտասարդը, որուն կարելի պիտի ըլլար վստահիլ իր կազմակերպչական աշխատանքներուն մէկ մասը:⁸

Տակաւին այդ դպրոցի շինարարութիւնը չսկսած, Տիթրիխ՝ Պազելի Աւետարանական Քարոզչական Ընկերութեան թելադրութեամբ 1824 թ. կը վերադառնայ Պազել,⁹ և իրեն փոխարէն կը նշանակուի այլ միսիոնար մը՝ զուիցերիացի Ֆրիտրիխ Հոհենաքերը, որ Քարրասէն (ներկայիս՝ Ինոսեմեցօ) Շուշի կը փութայ Ջարեմպայի սկսած քարոզչական գործունէութեան սատարելու համար:¹⁰

Պազելի մէջ Տիթրիխի հաղորդած տեղեկութիւնները մեծ յոյսերով կը ներշնչեն Աւետարանական Քարոզչական Ընկերութեան ղեկավարութիւնը՝ Անդրկովկասի մէջ լիարժէք յաջողութիւններու հասնելու հեռանկարով: Ան իսկոյն կ'որոշէ լրացուցիչ ուժեր ուղարկել Կովկաս, մինչ բարեպաշտ զոյգ մը Քարոզչական Ընկերութեան կը նուիրէ 4.000 ֆունտ ստերլինգ, ձեռնարկուած առաքելութեան նիւթապէս օժանդակելու՝ արևելեան և հայկական սուրբ գրոց վերաբերեալ գրականութիւն

5 Stú Pagel, Licht im Osten, 16–17; Gazer, Studien zum kirchlichen Schulwesen, 9; Katterfeld, Felician von Zarembo, 71–80; Manoukian, Zeugen der Menschlichkeit, 122:

6 Stú Basler Mission, Schuschi. Arbeit der deutschen Missionarien dasselbst, 505; Katterfeld, Felician von Zarembo, 77; Gazer, Studien zum kirchlichen Schulwesen, 11; Manoukian, Zeugen der Menschlichkeit, 122:

7 Stú Basler Mission, Schuschi. Arbeit der deutschen Missionarien dasselbst, 509; Յովսէփ Արցախեցիին մասին նաև՝ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 884–87:

8 Stú Basler Mission, Schuschi. Arbeit der deutschen Missionarien dasselbst, 403, 505:

9 Stú Basler Mission, Die Missionsversuche unserer evangelischen Missionsgesellschaft, 385.

10 Նոյնը:

հրատարակելու նպատակով:¹¹ Երբ Կարլ Գոթթլիպ Փֆանտեր և Գոթթլիպ Վեօր իսկոյն դէպի Շուշի կը մեկնին, անոնց հետ Տիթրիխ և Քրիստոֆ Հասս դէպի Մոսկուս կ'ուղևորուին՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ գրաբար և աշխարհաբար հայերէն սորվելու առաջադրանքով:¹² Այդ ընթացքին միսիոնար Հոհենաքեր Շուշի կը ժամանէ 23 մայիս 1824 թ.:¹³

Միսիոնարները խիստ նպաստաւոր էին Լոնային Ղարաբաղի Շուշի բերդաքաղաքը վերածելու Անդրկովկասի և հարևան իսլամական երկիրներու առաքելութեան համար գլխաւոր կեդրոնի մը: Այնուամենայնիւ, Շուշիի մէջ հաստատուած միսիոնարներու սկզբնական փոքր հաստատութիւնը շուտով անհամապատասխան կը նկատուի քարոզչական գործունէութիւն ծաւալելու այն ծրագրերուն համար, որոնք կը նախատեսուէին ապագայի հեռանկարով. ուստի անհրաժեշտ եղաւ քաղաքի յարմար վայրերէն մեկուն մէջ գտնել աւելի մեծ տարածք մը՝ այս ուղղութեամբ բոլոր կարիքներուն լուծումներ գտնելու պահանջով:¹⁴

Ահաւասիկ, ճիշդ այդ ժամանակ էր, երբ Շուշիի գլխաւոր նահանգապետը չափազանց գրաւիչ առաջարկով մը կը մօտենայ բողոքական քարոզիչներուն. վաճառքի դրուած էին Շուշի քաղաքի կեդրոնական մասին մէջ, հայկական և թաթար-մահմետական թաղամասերու սահմանին, շուկային մօտ գտնուող նախապէս Միրզա Ալի և Ապի Սամիթ պէյերուն պատկանող լքուած ու կիսավեր մնացած ապարանքները: Անոնք 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին ժամանակ փախուստի դիմելով Պարսկաստան ապաստանած էին, մինչդեռ իրենց ապարանքը ռազմական աւար նկատուած էր ռուսական բանակին կողմէ՝ զանոնք յատկացնելով արքունի գանձարանին:¹⁵ Ժամանակին այդ տարածքը «Casern»¹⁶ (զօրակայան) կոչուած է, որ ենթադրել կու տայ, թէ այնտեղ պարսկական կայազօր մը գտնուած է՝ տարածաշրջանին մէջ պարսից ռազմական վերահսկողութիւնը ապահովելու համար: Հայ գրականութիւնը յաւելեալ տեղեկութիւններ կը հաղորդէ այդ կալուածներու ճշգրիտ վայրին վերաբերեալ նշելով, որ անոնք կը գտնուէին տեղի հայերուն կողմէ «Տապաղներու (կաշեգործ) ձոր» կոչուած շրջանին մէջ:¹⁷ Սակայն այժմ անոնք վաճառքի դրուած էին ռուսական բանակի գլխաւոր հրամանատար Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովի մասնաւոր հրամանագրով:¹⁸

Մենք պիտի չկարենայինք այս կալուածի մասին կարևոր մանրամասնութիւններ իմանալ, եթէ զուիցերիացի քարոզիչ եղբայրներէն Հոհենաքեր, 10 փետրուար 1826 թ., չներկայացնէր ծաւալուն տեղեկագիր մը Պազէյի Աւետարանական Քարոզչական

11 Ամդ, 411-412:

12 Ամդ, 414-415:

13 Ամդ, 385:

14 Sñu Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1826), 501:

15 Ամդ, 501-502; տես նաև՝ Hohenacker, Bericht über den Bau des neuen Missions-Hauses zu Schuschi, Nr. 3, 6:

16 Sñu Waldburger, Missionare und Moslems, 66:

17 Sñu Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 87:

18 Sñu Hohenacker, Bericht über den Bau des neuen Missions-Hauses zu Schuschi, Nr. 3, 3:

Ընկերութեան տնօրէնութեան «Ձեկոյց 1825 թ. Շուշիի մէջ միսիոնարական տան կառուցման վերաբերեալ»¹⁹ խորագրով: Ըստ երևոյթին, Հոհենաքեր իր սոյն տեղեկագիրը պատրաստած է միսիոնարական տան շինարարական աշխատանքներուն գրեթէ մեծ մասի աւարտին:²⁰ Դժբախտաբար սոյն ձեռագիրը այլ փաստաթուղթերու հետ միացուելով կոշտ կազմով ամփոփուած է հատորի մը մէջ, որուն համար ալ ձեռագրին սիւնակները դարձած են գրեթէ անընթեռնելի: Ուստի, յաճախ ստիպուած էինք բովանդակութենէն եզրակացնելու, թէ ինչի՞ մասին կրնային ըլլալ անընթեռնելի դարձած բառերը: Այսպէս, զեկոյցէն յստակ կը դառնայ, որ ամբողջ միսիոնարական հաստատութիւնը բաղկացած էր 4 առանձին շէնքերէ. (տես նկար 1)

1. Քարոզչական առաքելութեան զլխաւոր շէնքը, որ ամբողջութեամբ վերակառուցուած շինարարութիւն մըն է,
2. Համեմատաբար աւելի փոքր տուն մը, որ հին շինութիւն մըն էր, որ վերանորոգուելով՝ սկիզբը նկատի կ'առնուի օգտագործելու համար իբրև հայկական դպրոց, ապա անոր կը կցուի տպարանի մասնաբաժինը, նաև
3. Տնտեսական ևս երկու շինութիւններ, որոնք պատկանած են միսիոնարական տան զլխաւոր շէնքին:²¹

Շուշիի Աւետարանական Քարոզչական առաքելութեան զլխաւոր շէնքը՝ առջևը դէպի արևելք և ետևի կողմը դէպի արևմուտք, միայրկ, ամուր կառուցուած շէնք մըն էր՝ իւրաքանչիւրը 14 պատուհանով առջևի և ետևի մասերը, նաև երեք մուտքերով, որոնք զարդարուած էին ճակատային զարդանախշերով, որոնք կը հատէին տունը և հաւասար թիւով կ'աւարտէին դէպի բակը առաջնորդող նոյնքան ելքերով (տես նկար 2, 3 և 4): Ամբողջ շէնքը ունէր 14 սենեակ, ընդամին՝ երկու խոհանոց և երկու մառան: Սակայն 4 սենեակ ստեղծուած էր փայտեայ փոխադրական պատերով, այնպէս որ զանոնք հեռացնելէ ետք սենեակներուն թիւը կը վերածուէր ընդամենը 10-ի: Այս սենեակները այնպէս բաշխուած էին, որ տան իւրաքանչիւր ծայրամասը ապահովուած էր երեք սենեակներով՝ ամէն մէկ ընտանիքի համար նախատեսուած խոհանոցով ու մառանով մը, իսկ տան մէջտեղը՝ կեդրոնական մուտքի երկու կողմերը կային ևս չորս սենեակներ, որոնք բոլորն ալ ունէին համապատասխան պատուհաններ:

19 Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1826), 501; Hohenacker, Bericht über den Bau des neuen Missions-Hauses zu Schuschi, Nr. 3, 6:

20 Այս զեկոյցին 16 էջերէ բաղկացած ձեռագիրը պահպանուած է Չուիցբերիոյ Աւետարանական Բարենորոգուած Եկեղեցիներու միջազգային առաքելութեան Mission 21 անունով հաստատութեան արխիւին մէջ (թղթ. FC-2,2), որուն պարտք կը զգամ յայտնելու իմ անկեղծ շնորհակալութիւնը՝ զայն ուսումնասիրելու նպատակով ինձի տրամադրելուն համար: Այստեղ ոչ-պակաս երախտապարտ եմ նաև դոկտ. Մնահիտ Աւագեանին և Mission 21 հաստատութեան արխիւներու պատասխանատու Տիկին Andrea Rhyen-ին, որոնք մեծապէս օգտակար հանդիսացան այս չափազանց դժուարընթեռնելի ձեռագիրը վերծանելու հարցով:

21 Տես անդ, 1:

Սենեակներէն մին կիսով չափ բաժնուած էր փայտէ դուռով մը և ունէր երկու պատուհան, իսկ մէկ այլ՝ աւելի փոքր սենեակ մը՝ ունէր միայն մէկ պատուհան: Բայց ընդհանուր առմամբ տան ճակատային մասը կային 8 սենեակներ, որոնք իրենց զովութեան պատճառով յարմար էին ամառուան համար, իսկ բակը կային ևս 6 սենեակներ, ուր բնակիլը աւելի հաճելի էր ձմեռ ժամանակ:

Թէ՛ արտաքին և թէ՛ ներսի պատերը ջարդուած քարէ էին, կրաքարով հիւսուած և լաւ երեսապատուած արտաքինով, իսկ պատուհանները նոյնպէս շրջանակուած էին զաճով և մոխիրով: Պատուհանները սովորական չափեր ունէին, բայց իւրաքանչիւրը բաղկացած էր երկու թւերէ, որոնցմէ ամէն մէկը կազմուած էր երեք ապակիով: Իւրաքանչիւր սենեակ, չորս կեդրոնական սենեակներէն բացի, ունէր վառարան և բոլորը ծածկուած էին ընդհանուր տանիքով մը:²² Այս տանիքը բաղկացած էր գերաններէ, որոնք խաչաձև ամրացուած էին տախտակներով, ծածկուած փայտի տաշեղներով և 1 ոտնաչափ հողով: Ձեղնայարկը կ'օգտագործուէր միայն հին իրեր պահելու և լուացքը չորցնելու համար:

Շուշիի Աւետարանական Քարոզչական առաքելութեան երկրորդ մասնաշէնքը համեմատաբար աւելի փոքր տուն մըն էր, որ բաղկացած էր երկու յարկէ (տես [նկար 5](#) և [6](#)): Սոյնը մեծ տունէն աւելի ցած էր և որուն ճակատը դէպի հիւսիս կը նայէր՝ ունենալով երկու մուտք մէջտեղը՝ ստորին և վերին: Վերջինս հասանելի էր դուրսէն երկու սանդուղներով, որոնք կը բարձրանային ստորին մուտքին մօտ գտնուող տան պատով և կ'աւարտէին վերին դռան դիմաց գտնուող շքամուտքով մը. իսկ բուն զաւիթը զարդարուած էր և ունէր ճակատ մը: Բնակութեան համար կահաւորուած էր միայն վերին յարկը, իսկ ներքևի յարկը, ուր տունը գետնի ամենացած մասին մէջ կը մխրճուէր, կը ներառէր նկուղ, մառան, խոհանոց, երկու փոքր սենեակ և ծառայողի սենեակ, ինչպէս նաև սենեակ մը լուացքի վերաբերեալ ամէն տեսակ գործիքներու համար և այլն: Տան վերի յարկը ունէր ութ պատուհան, իսկ վարիմը՝ միայն մէկ: Ութ պատուհաններէն իւրաքանչիւր զոյգը կը լուսաւորէր չորս սենեակ: Այս տունը նոյնպէս ամուր կառուցուած էր, բայց պատերը համեմատաբար աւելի թոյլ էին, քան զլիւսաւոր շէնքին պատերը. տանիքը կաւարածածկ էր ([տես նկար 7](#) և [8](#)):

Առաջին յարկին յատակը հողածածկ էր, իսկ վերի յարկը ծածկուած էր վատ տախտակներով, որոնց պատճառով ձմեռ ժամանակ սենեակները շատ ցուրտ ու վատառողջ էին: Առաստաղը, այսպէս կոչուած, կաւէ յատակով մը ծածկուած էր, լայնակի շարուած գերանները միմեանց հետ կապուած էին կաւային թաղանթներով (կամ ծալքաւոր փայտով), այսինքն՝ փայտէ ձողիկներ՝ միահիւսուած ծղոտախառն կաւով: Ուրեմն՝ ամբողջը ծածկուած էր ծղոտախառն կաւի շերտով, ներքևը ծեփուած, իսկ վերը հողով լեցուած: Այս տունին մէջ ապրիլը, որուն պատուհանները բոլորը դէպի հիւսիս կը նայէին, բացի այն մէկէն, որ դէպի արևելք կը նայէր, բաւական տհաճ էր, քանի որ արևուն ճառագայթները անոնց մէջ բնաւ չէին ներթափանցեր: Առկայ անպատեհութիւնը կարելի էր լուծել, թերևս հարաւային կողմէն բանալով լուսանցք

մը, սակայն պատին թուլութիւնը և յաւելեալ խոչընդոտներ թոյլ չեն տար այդ քայլին դիմելու: Այս տունը նոյնպէս դուրսէն պատուած էր կրաքարով և աւազով, բայց այստեղ շատ աւելի քիչ խնամք դրուած էր, քան գլխաւոր շէնքին վրայ: Վերի և վարի յարկերուն դուռերուն վրայ կղպանքներ տեղադրուած են, մինչդեռ առաջ անոնք միայն փայտէ բռնակներ ունէին, որոնք կրնար որևէ մէկը բանալ:

Այն, ինչ կը վերաբերի միսիոնարական գլխաւոր շէնքին կից երկու կենցաղային շէնքերուն, ապա աւելի մեծը պէտք է համարել երկթև, որ ոչ մէկ և ոչ ալ երկյարկանի կարելի է կոչել, և որուն մէջտեղի մասը կը գտնուի ելուստ մը (**տեսն նկար 9**): Հարաւէն տեսանելի է, որ 6-7 ձիու համար նախատեսուած ախոռը կը գտնուի գլխաւոր շէնքի կողային թևին կողմը, որ զուգահեռաբար կ'անցնի գլխաւոր տունին հետ: Հիւսիսային ծայրը գլխաւոր թևն էր՝ երկու լրացուցիչ սենեակներով, որոնցմէ մէկը նախապէս օգտագործուած է իբրև պահեստ, իսկ միւսը՝ բնակելի տարածք: Մէկ սենեակը սովորաբար կ'օգտագործուի ձիերը կերակրելու նպատակով պահելու անհրաժեշտ յարդը, իսկ միւսը՝ փայտ, հին սնտուկներ և այլն: Այս շէնքը նոյնպէս քարաշէն է և ունի կաւարածածկ տանիք մը:²³

Երկրորդ շէնքը, որ շատ աւելի փոքր էր, քան նախորդ նկարագրուածը, կը պարունակէր միայն նկուղ մը և ունէր երկու աւելի փոքր խցիկներ, որոնք, սակայն, բարձր խոնաւութեան պատճառով բնակութեան համար պիտանի չէին: Վառելափայտը կը պահուէր գոմին մէջ: Այս շէնքը նոյնպէս աղիւսէ կառուցուած էր և ունէր կաւարածածկ տանիք մը:

Շէնքերը շրջապատող այգիներուն մասին կարելի է հետևեալը ըսել. եթէ շատեր կը խօսին միայն մէկ այգիի մասին, ապա պէտք է նշել, որ բացի մեծ այգիէն, որ կը գտնուէր միսիոնարական տան գլխաւոր շէնքին դիմաց, կային նաև քանի մը փոքր այգիներ, բայց անոնք մասնաւորաբար կարևոր չէին: Այսպէս, ետևի տան շուրջօրըրը կար հողատարածք մը, կամ ինչպէս առաջ կը կոչուէր, աւելի մեծ տնտեսական շինութիւն մը, որ կարելի էր օգտագործել, բայց որովհետև հոն բաւարար արև չկար՝ անուշադրութեան մատնուած էր: Ուրիշ փոքր այգի մըն ալ կը գտնուէր փոքր տան վերի մասը, կ'օգտագործուէր միայն միրգերու, նաև փոքրիկ ծաղկանոցներու համար: Փաստացի այգին ստեղծուած էր լանջին քանի մը դարատափերով: Բուն այգին կը տարածուէր հողատարածքի լանջին և ունէր քանի մը բարձրաւանդակներ:

Այս այգին հիմնականօրէն կ'օգտագործուէր լաւ մրգեր քաղելու համար՝ խրճճոր, տանձ, թթու կեռաս, դեղձ և ծիրան, բայց ծառերը լաւ չէին աճեր, մասամբ այն պատճառով, որ շատ ցուրտ էր, իսկ հողը՝ չափազանց չոր: Ամառը այգին ջրել կարենալու համար քանի մը ջրհորներ փորած էին, երբ անձրև հազուադէպ կու գար: Սակայն գոյութիւն ունեցող ջուրը պիտանի չէր այդ նպատակին համար, քանի որ այդ չափազանց կոշտ էր ու աղի: Ի դէպ, այգին լաւ վիճակի մը մէջ պահելու պարագային կարելի էր երկու ընտանիք բաւական լաւ կերակրել սովորական բանջարեղէնով, բացի գետնախնձորէն ու կաղամբէն: Բնակավայրի ամբողջ

23 Տես անդ, 2-3:

տարածքը շրջափակուած էր մեծ դարպասով և ցանկապատով մը, որով շուկայէն անմիջապէս կարելի էր հասնիլ Աւետարանական Քարոզչական առաքելութեան գլխաւոր շէնքը: Աւելի փոքր դարպաս մըն ալ ելքը կ'ապահովէր բնակավայրին հակառակ կողմէն:²⁴

Հոհենաքերի զեկոյցը Շուշիի միսիոնարական նորակառոյց շէնքի չափերուն և յաւելեալ կառոյցներուն վերաբերեալ նաև կը հաղորդէ հետևեալ մանրամասնութիւնները.

«Ամբողջ շէնքը ունի 180 ոտնաչափ երկարութիւն և 31½ ոտնաչափ լայնութիւն, պատերը կը հաշուարկուին՝ 1½ ոտնաչափ, իսկ շէնքին շրջանակուած պատերը՝ ½ ոտնաչափ, հետևաբար իւրաքանչիւր սենեակի համար կը մնայ 14 ոտնաչափ լայնութիւն: Շէնքին երկարութեան չափը ինքնին հասկնալի է, ու յստակ նշուած է նաև յատակագիծին վրայ: Միջանցքները լոյսի տակ 6 ոտնաչափ են, իսկ դէպի նկուղ տանող սանդուղը կը զբաղեցնէ 3 ոտնաչափ տարածք մը, այսինքն՝ միջանցքին շուրջ կէտը: Յարակից շէնքերուն երկու աստիճանները պարզ են և կը գտնուին իրենց ճիշդ տեղերը. առաջինը դէպի վեր կ'առաջնորդէ շէնքին ճիշդ մէջտեղէն. սակայն հարկ է նկատի ունենալ, որ միջին շէնքին սանդուղը ետևէն դէպի մէջտեղ կը բարձրանայ: Միջանցքին վերջաւորութեան ազատ կը մնայ մօտաւորապէս 3 ոտնաչափ տարածք մը, ուրկէ միայն սանդուղը կը սկսի. այս կերպ բոլոր աստիճանները կ'առաջնորդեն դէպի յատակին միջնամասը: Միջին միջանցքի այս վերջին սանդուղին տակ սենեակ տանող դուռ մը կայ. սա արդէն իր տեղը կը գտնէ, որուն պարզապէս պէտք է ուշադրութիւն դարձնել: Ի վերջոյ, իւրաքանչիւր միջանցքի վերջաւորութեան կայ նաև պէտքարանային օգտագործման խցիկ, ինչպէս որ տան դուրսի խոհանոցներուն մէջ ալ վառարաններ տեղադրուած են: Սոյնը կը վերաբերի յատակագիծին:

Տան բարձրութիւնը հակիրճ հետևեալն է. 1½ ոտնաչափ բարձրացուած է գետինէն, մուտքին մօտ ձևաւորելով բաւականաչափ աստիճաններ. այս 1½ ոտնաչափին վրայ այժմ կը գտնուի շէնքին յատակը: Այս 1½ ոտնաչափին կամ գետինէն, այժմ կը հաշուէք 3½ ոտնաչափ մինչև պատուհանին անցքը. այսպէս, փոսը ինքնին կ'ունենայ 4 ոտնաչափ լայնութիւն և 5 ոտնաչափ բարձրութիւն: Այս 5 ոտնաչափին կամ պատուհանի անցքէն կարելի է 1½ ոտք հաշուել մինչև սենեակին առաստաղը: Այս կերպ սենեակը կը հասնի 10 ոտնաչափ բարձրութեան: Տանիքը ամենահեշտը կը կառուցուի նոյն ձևով, բայց որքան աւելի հարթ, այնքան աւելի գեղեցիկ: Խոհանոցներուն ծխնելոյզներն ու օճախները, ինչպէս նաև սենեակներուն օճախները պէտք է տեղադրուին միայն յարմարութեան համաձայն: Կը մնայ միայն յիշեցնել, որ խոհանոցներու ջուրի դոյլին պէտք է տեղ յատկացնել նաև ետևի պատին վրայ, մօտակայ ծորակին

24 Տես անդ, 3-4:

մօտ, որպէսզի մէկը կարենայ ջուրը մօտէն լեցնել: Մնացածը ինքնըստինքեան կը տնօրինուի»:²⁵

Վորոնշեայ նկարագրողումները պատրաստուած են ուղղակի չոհեմաքերին կողմէ և վերցուած են անոր արդէն հիշատակված զեկոյցէն: Միրզա Ալի պէյի և Ապի Սամիթ պէյի նախապէս յիշատակուած երկու տունները հիմնովին կը վերանորոգուին, իսկ խարխլուն հատուածները կը քանդուին: Այդ տուններուն աւերակներէն յառաջացած քարի բեկորներն ու փշրանքները կ'օգտագործուին իբրև շինանիւթ նոր կառուցուող տան համար:²⁶ Երբ ճարտարապետը, որ հաւանաբար գնման պայմանագրին մէջ նշուած Fährnich Gorbatschewski-ն է,²⁷ Պազելի աւետարանական քարոզիչներուն համար գնուած հողամասը կը չափէր, մահմետական թաթար երեք դրացիներ իսկոյն կ'առաջարկէն վաճառել իրենց տունները, որովհետև մահմետականներուն համար ընդունուած չէր ապրիլ քրիստոնէաներու անմիջական հարևանութեան մէջ: Սոյնը, բարեբախտաբար, կ'իրականանայ առանց դժուարութեան: Վատ վիճակի պատճառով այդ տուններէն երկուքը ամբողջութեամբ կը քանդուին, իսկ Պազելի միսիոնարական կալուածին կը միացուի անոնցմէ միայն մէկը՝ այգիով և ջրհորով:²⁸

Շինարարական աշխատանքներու իրականացման համար կը հրաւիրուին զերմանացի տասնմէկ որմնադիրներ Գանձակի մօտակայքը գտնուող Հելենենտորֆ բնակավայրէն: Բաց աստի, շինարարութեան վրայ կ'աշխատէին նաև հայ արհեստաւորներ՝ որմնադիր, աստղձագործ, ապակեգործ, փականագործ և այլ բանուորներ: Մնացեալ 90 օրավարձու բանուորները, որոնք ջուր, փայտ, քար և այլ շինանիւթեր կը փոխադրէին, նոյնպէս հայեր և թաթարներ էին, որոնց կը վերահսկէր զերմանացի շինարար մը հարևան Հելենենտորֆէն:²⁹

Շուշիի մէջ Պազելի միսիոնարական տան կառուցման ժամանակ Ջարեմպային և չոհեմաքերին դժուար կ'ըլլայ մերժել գլխաւոր հրամանատար և գեներալ արքայազն Մատթթովի առաջարկը՝ քանի մը սիւներ աւելցնել և կամարներ զետեղել գլխաւոր մուտքերուն, նաև որոշ զարդաքանդակներ՝ ուղղակի շէնքին պատերուն վրայ:³⁰ Պազել ուղարկած իրենց տեղեկագրութիւններուն մէջ թէ՛ Ջարեմպա և թէ՛ չոհեմաքեր ստիպուած կ'ըլլան իրենք զիրենք արդարացնել պատճառաբանելով, թէ ինչո՞ւ համար շինարարութեան ընթացքին չնախատեսուած և յաւելեալ ծախսեր յառաջացած են: Յամենայն դէպս, Շուշիի մէջ գործող միսիոնարներու հասցէին արդէն սկսած էին քննադատութիւններ հնչել Պազելի բարեպաշտական որոշ շրջանակներէ ներս, քանի որ անոնց կը թուէր, թէ անոնք անցած էին համեստութեան սահմանները

25 Տե՛ս անդ, 4–5:

26 Տե՛ս անդ, 5:

27 Տե՛ս Beylage (sic!) II, անդ:

28 Տե՛ս անդ, 6:

29 Տե՛ս անդ, 7:

30 Տե՛ս անդ, 8:

և այսպիսի պալատանման համալիր մը չէր համապատասխաներ ճշմարիտ առաքելութեան ու քրիստոնէական աղքատութեան ոգիին: Սիւթական բոլոր օժանդակութիւնները, որոնք կը ստանար Պազէլի Աւետարանական Քարոզչական Ընկերութիւնը, սրտաբուխ նուիրատուութիւններէ կը գոյանային, և բարոյական ընկալումէ մեկնելով պէտք չէր, որ այդ գումարները յումպէտս վատնուէին:³¹

Վերոնշեալ Միրզա Ալի պէյի և Ապի Սամիթ պէյի տուներուն ձեռքբերումը Պազէլի Աւետարանական Քարոզչական Ընկերութեան կ'արժէ 3180 ռուսական արծաթեայ ռուբլի, որ կը համապատասխանէ 1060 ևրոպական տուքատի, ինչը չափազանց աժան էր այդ ժամանակուան շուկայական պայմաններուն համար:³² Բաց աստի, սակայն, կ'ըլլան նաև շինարարութեան հետ կապուած ծախսեր՝ շինանիւթի գնում ու աշխատանքային վարձատրութիւն և այլն, որոնք կալուածի գնման մայր գումարին հետ միասին կը կազմեն 5177 արծաթեայ ռուբլի և 55 կոպեկ, որ կը համապատասխանէ մօտ 1726 տուքատի:

Այնուհանդերձ, միսիոնարական գործը պէտք էր առայժմ անարգել շարունակել: Մինչ սկիզբը Ջարեմպան միայն ռուսերէն լեզուի ուսուցման համեմատաբար փոքր դպրոց մը բացած էր, այժմ, 29 յունուար 1825 թ., կը կատարուի հայկական նոր դպրոցի մը պաշտօնական բացումը.

«Հանդիսութեան ներկայ սակաւաթիւ հայերուն հետ այդօրը Հելենէնտորֆէն Շուշի կը ժամանեն գերմանացի ընկերներէն ոմանք՝ իրենց աղօթքներով աջակցելու համար այս ուրախառիթ տօնակատարութեան»:³³

Նախ Հոհենաքեր կը ստանան նոր հայկական դպրոցին տնօրէնութեան պաշտօնը, մինչև Հասս, որ արդէն մասնագիտութեամբ վարժապետ մըն էր Վիւրթընպերկէն, Մոսկուայի Լազարեան ձեմարանին մէջ հայերէն սորվելու իր ծրագիրը աւարտելով Շուշի կը ժամանէ ու միանգամայն յանձն կ'առնէ դպրոցին կառավարման պարտականութիւնը: 1829 թ., այս օրինակելի դպրոցն ունէր 40 աշակերտ, զոր շուտով Հասս կը յաջողի ընդլայնել և աշակերտութեան թիւը հասցնել մինչև 100-ի:³⁴ Հետաքրքրականօրէն միսիոնարներուն կառոյցները տեղացի ժողովուրդը «Լէմսի [= նէմցի] տներ», այսինքն՝ «գերմանացիներու տներ», կամ դպրոցը՝ «Լէմսի շկոլա», այսինքն՝ «գերմանական դպրոց» կը կոչէր:³⁵ Դպրոցը, անշուշտ, բաց էր ամէնուն համար, սակայն նախընտրութիւն կը տրուէր աղքատ ընտանիքներէ եկող աշակերտներուն:³⁶ Պազէլի միսիոնարները նաև չխորշեցան Հայ եկեղեցւոյ

31 S'eu Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1826), 502; Waldburger, Missionare und Moslems, 66:

32 Հմմտ. Hohenacker, Bericht über den Bau des neuen Missions-Hauses zu Schuschi, 3, 11:

33 S'eu Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1825), 407; Schlatter, Geschichte der Basler Mission, 101:

34 Schlatter, Geschichte der Basler Mission, 101–102:

35 S'eu Լէօ, Պատմութիւն Դարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 87:

36 S'eu Schlatter, Geschichte der Basler Mission, 101:

Ժամանակի յայտնի վարդապետներէն՝ Պօղոս Ղարատաղցին հայերէն լեզուի և քերականութեան դասաւանդման նպատակով որպէս հայ ուսուցիչ նշանակելէ:³⁷ Յերեկային դպրոցէն բացի, կը գործեր նաև գիշերօթիկ մը, այսպէս կոչուած, ուսուցիչներու նախապատրաստութեան դպրոց մը՝ 6 չափահաս աշակերտով, որոնցմէ ոմանք Արցախի քանի մը շրջաններուն մէջ հետագային դպրոցներ բանալով՝ զարկ տուին հայերէնի դասաւանդութեան:³⁸

Պազելի միսիոնարները կը յաջողին իրականացնել իրենց կարևորագոյն ծրագրերէն մէկը՝ Շուշիի մէջ հիմնել տպարան մը և արդէն 1828-ին քարոզչական նպատակներով անցնիլ հրատարակչական գործունէութեան:³⁹ Առաջին տպագրիչը եղաւ Յովհաննէս Ապերքրոմպի (Johannes Aberkrombie) անունով չերքեզ երիտասարդ մը, զոր սկովտիացի միսիոնարներ Քարրասի մէջ ստրկութենէ գնելով՝ կ'ազատագրեն, կը կրթեն, ապա Աստրախանի մէջ կը վաժեցնեն տպագրական արհեստին:⁴⁰ Սկստի ունենալով, որ տպագրական գիրքերու պահանջը Շուշիի մէջ առաւել ևս կը շատնար, նաև համեմատաբար փոքրածաւալ դասագիրքերէն կը նախատեսուէր ձեռնարկելու աւելի բարդ գործերու, զորօրինակ Աւետարաններու կամ ամբողջական Նոր Կտակարանի տպագրութեան, որոնք պիտի ունենային շուրջ 2000 կամ աւելի մեծածախ տպաքանակ՝ հարկ կը զգացուի Պազելէն մասնագէտ տպագրիչի մը առաքումին, որ 1830 թ. ապրիլէն սկսեալ կ'իրականանայ՝ յանձին Եոհան Քրիստիան Ֆրիտրիխ Եուտթի (Johann Christian Friedrich Judt):⁴¹

Սկզբնական շրջանին, Կովկասի և Կասպից ու Սև ծովերու միջև ձգուող տարածաշրջաններուն մէջ հեթանոսները, թուրք-թաթարներն ու հրեաները դարձի բերելու ուղղութեամբ քարոզչական գործունէութեան բոլոր պայմանները շատ բարենպաստ էին, ինչպէս քաղաքական, նոյնպէս ընկերային-հասարակական առումով: Շատ ճիշդ էր նաև Շուշիի ընտրութիւնը իբրև քարոզչական առաքելութեան կեդրոն, որպէսզի այստեղէն աւետարանել կարենան ոչ միայն Կովկասի հեթանոս, մահմետական թաթար և հրեայ բնակիչներուն, այլև ներթափանցել հարևան երկիրները՝ հիւսիսային Պարսկաստան և արևելեան Թուրքիա: Պազելի միսիոնարները առաջին քանի մը տարիներուն ջերմ ընդունելութեան կ'արժանանան Շուշիի հայ ազգաբնակչութեան կողմէ և անոնք կը յաջողին նոյնիսկ լաւ յարաբերութիւն մշակել ժամանակի երևելի հայ եկեղեցականներուն՝ Ներսէս արքեպիսկ. Աշտարակեցիի, Գանձասարի կաթողիկոս Սարգիս Բ. Գանձասարեցիի և անոր յաջորդած Պաղտասար մետրոպոլիտ Ջալալեանի հետ:⁴²

37 Տնւ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 94:

38 Տնւ անդ, 90; Schlatter, Geschichte der Basler Mission, 101-102:

39 Տնւ Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1829), 376:

40 Տնւ Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1828), 420 շ.:

41 Տնւ Gazer, Studien zum kirchlichen Schulwesen, 27; Schlatter, Geschichte der Basler Mission, 102 շ.:

42 Տնւ Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1825), 508-509; Մանուկեան Ա., Պազելի աւետարանական քարոզչական ընկերութիւնը և հայերը, 93-94:

Սակայն այս իրավիճակը, որ բոլոր առումներով նպաստաւոր կը թուէր ըլլալ աւետարանական քարոզչութեան համար, հետզհետէ կը վատթարանայ, երբ Աղէքսանդր Ա. ցարը կը մահանայ 1825 թ. ու անոր կը յաջորդէ Նիկոլայ Ա.-ը, որ քաղաքական նկատառումներէ մեկնելով, ուղղակի լաւ տրամադրուած չէր Ռուսաց կայսրութեան մէջ գործող օտարերկրեայ և այլադաւան քարոզիչներուն հանդէպ:⁴³ Բաց աստի, կը վատթարանան նաև Հայ եկեղեցւոյ ղեկավարութեան հետ լաւ յարաբերութիւններ մշակելու հնարաւորութիւնները, նոյնիսկ աստիճանաբար որոշակի թշնամանք կը յառաջանայ, և սոյնը աւելի կը սրի, երբ միսիոնարներ ականյայտօրէն բարեհաճութիւն կը գտնեն տեղի հայ ազգաբնակիչներուն մօտ: Հայ բարձրաստիճան եկեղեցականներ կը վախնային ժողովուրդին վրայ իրենց ազդեցութեան տկարացումէն և ունեցած հեղինակութեան նահանջէն, երբ յատկապէս հոգևորականներու դասէն ալ որոշակիօրէն կը սկսի դրական մօտեցում մը Պազէլի աւետարանական քարոզիչներու գործունէութեան նկատմամբ:⁴⁴ Մեծ էր զայթակողութիւնը՝ երես դարձնել հայ կրօնակից քոյրերու և եղբայրներու, երբ անոնք կը սկսին հոգևին պատրաստակամութիւն ցուցաբերել ընդունելու Աւետարանական եկեղեցւոյ դաւանութիւնը: Օտար նուաճողներու դարաւոր տիրապետութեան տակ հեծող և այդ ժամանակաշրջանի կովկասեան ապրելակերպի մթութեան մէջ միւրճուած ժողովուրդը կը տեսնէ կրոնական քաղաքակրթութեան, մշակոյթի և նոր գիտելիքներու սփռած լոյսը՝ աւետարանական քարոզչութեան ճամբով յազեցնել կարենալու համար իր հաւատքին ծարարը, նաև թէկուզ միսիոնարներէն ունենալու համար նուազագոյն կրթութեան մը իրաւունքը:⁴⁵ Ահաւասիկ, նաև այսպէս կը ստեղծուի Շամախիի հայ աւետարանական համայնքը, որ, ի վերջոյ, ճակատագրական կը դառնայ Պազէլի միսիոնարներու քարոզչական առաքելութեան խափանման:⁴⁶

Սոր կաթողիկոսը՝ Յովհաննէս Ը. Կարբեցի, ջանք և ճիգ չի խնայեր Պազէլի միսիոնարները ռուսական իշխանութեանց մօտ ամբաստանելու մարդորսական գործունէութեան մեղադրանքով:⁴⁷ Նկատի ունենալով այս լարուած իրավիճակը, Պազէլի Աւետարանական Քարոզչական Ընկերութեան տնօրէնութիւնը ստիպուած կ'ըլլայ 1833-ին բազմակի հրահանգներով Շուշիի մէջ գործող իր միսիոնարներուն ազդարարել, որ անոնք իսկոյն դադարեցնեն իրենց առաքելական գործունէութիւնը հայ ազգաբնակչութեան մէջ և, այսուհետև, կեդրոնացնելով իրենց ուժերը ոչ-քրիստոնէաներու՝ այլ միայն թաթարներուն, նաև պարսկական ու թրքական տարածաշրջաններուն մէջ ապրող մահմետականներուն վրայ:⁴⁸

43 Անդ, 71:

44 Անդ, 67:

45 Տն՝ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 88–90:

46 Տն՝ Waldburger, *Missionare und Moslems*, 90; Schlatter, *Geschichte der Basler Mission*, 105:

47 Տն՝ անդ, 88–90; Մանուկեան, Պազէլի աւետարանական քարոզչական ընկերութիւնը և հայերը, 77:

48 Տն՝ Schlatter, *Geschichte der Basler Mission*, 104:

Հակառակ վերահաս վտանգը կանխարգիլելու ուղղութեամբ գործադրուած բոլոր ճիգերուն, 23 օգոստոս 1835 թ. Սանկտ-Պետերբուրգէն Շուշի կը հասնի ցարական հրամանագիր մը, ընդամենն Ռուսական կայսրութեան սահմաններէն ներս Պազելի միսիոնարներուն ընդհանրապէս կ'արգիլուի քարոզչական որևէ գործունէութիւն:⁴⁹ Ի գործ դրուած բոլոր ջանքերը իրավիճակը բարելաւելու ուղղութեամբ ապարդիւն էին:⁵⁰ Այնուհետև միսիոնարներուն համար ուրիշ բան չէր մնար ընել, քան Պազելի Աւետարանական Քարոզչական Ընկերութեան տնօրէնութեան ցուցմունքով Շուշիի մէջ ամէն ինչ լուծարել և այլ երկիրներու մէջ առաքելական գործունէութեան նոր առաջադրանքներ ստանձնել:

Չարեմպան և տպարանի պատասխանատու միսիոնար Judt-ը տակաւին կը մնան Շուշի կազմակերպելու համար միսիոնարական տան փակումը և անոր վաճառքը ռուսական պետութեան: Անոնք կը ջանան իրենց ունեցած բոլոր գոյքերը, ինչպէս նաև «Տապաղներու ձորը» գտնուող իրենց կալուածը վաճառել 14.000 ռուբլիի, որմէ 3.000 ռուբլին տիրող «անգիր կարգերուն» համաձայն կը հոսի տեղւոյն պետական պաշտօնէաններուն գրպանը: Փաստօրէն Չարեմպա վերջին միսիոնարն էր, որ 1838 թ. ապրիլին վերջնականապէս իր ետին կը թողու այնքան երազներով օժուէն Շուշիի Աւետարանական առաքելական կեդրոնը՝ վերստին ուղևորուելով դէպի Պազելի:⁵¹

Իհարկէ, այս ձախողութեան համար վճռորոշ էր ցարական Ռուսիոյ ներքաղաքական անբարեացական զարգացումը ընդհանրապէս օտարերկրեայ կրօնական առաքելութիւններուն հանդէպ, որուն զոհերէն մին կը դառնայ նաև Պազելի Աւետարանական Քարոզչական գործունէութեան ծրագիրը: Բնականաբար, հայ պահպանողական եկեղեցականներուն ուժն ու ազդեցութիւնը ոչ մէկ կերպ չէր կրնար համապատասխանել միսիոնարներու քարոզչական եռանդին և անոնց ձեռք բերած յաջողութիւններուն, եթէ երբեք բացակայէր ցարական պետութեան միջամտութիւնը:

Բոլոր պարագաներուն, յետադարձ հայեացքով մը այստեղ արդարացի պիտի ըլլայ հարց տալ. եթէ երբեք Շուշիի մէջ հաստատուած Պազելի Աւետարանական քարոզչութեան ծրագիրը այլ կերպ ընթանար և Հայ եկեղեցին իր հոգևոր սպասաւորներով, արդարև, հանդիսանար որոշակիօրէն յաջողութեան առաջնորդող կամուրջ մը, կամ եթէ երբեք կարելի ըլլար Արցախի տարածքին թէկուզ մահմետական թուրք-թաթարներէ իրականացնել քանի մը տասնեակ քրիստոնէական թրքախօս համայնքներու ստեղծումը, արդէօք տարածաշրջանին մէջ ընկերային, հասարակական, մշակութային և քաղաքական կեանքը աւելի դրական և խաղաղ զարգացում մը կրնա՞ր ապահովել: Ցաւօք, ոչ ժամանակը, ոչ ալ

49 Տնւ Manoukian, Zeugen der Menschlichkeit, 134:

50 Տակաւին Շուշի գնտուող Պազելի միսիոնարները ռուսական իշխանութիւններուն ներկայացուցին աղերսագիր մը, որուն մէջ անոնք կը ջանային պարզել իրենց անմեղութիւնը: Այդ աղերսագիրը, որ 6./8. մարտ 1836 թ. կը կրէր, ստորագրած էին Pfander, Zarembo և Judt: Աղերսագիրը տնւ Basler Mission, Magazin für die neueste Geschichte (1836), 467–480; այս մասին նաև՝ Manoukian, Zeugen der Menschlichkeit, 134:

51 Տնւ անդ, 135:

պատմությունը կարելի չէ շրջել, բայց մենք կրնանք դասեր քաղել անցեալէն՝ գէթ այսօր և վաղը ցուցաբերելով լայն հանդուրժողականություն և հասկացողություն մը մեր հաւատակից քոյրերուն և եղբայրներուն նկատմամբ:

Դժուար է ըսել, թէ շուրջ 200 տարիներու ժամանակի մը հոլովոյթի ընթացքին ինչ եղաւ Շուշիի մէջ Պազելի միսիոնարական տունը: Հայ Առաքելական եկեղեցւոյ Արցախի թեմի սպասաւորներէն բարեկամ մը վերջերս կը հաւաստիացնէր, թէ այդ տունը տակաւին կանգուն էր մինչև Շուշիի առումը 2020 թ. նոյեմբեր 9-ին ազրպէյճանական զօրքերուն կողմէ: Պազելի միսիոնարական տունը, ստոյգ, հայերոպական՝ զուիցերա-գերմանական եզակի կոթող մըն է, մշակութային ժառանգութիւն մը, որուն գոյառումը թուագրուած է 1825 թուականով: Այս պահուն առաւել ևս դժուար է կանխագուշակել, թէ ինչ պիտի ըլլայ անոր վերահաս ճակատագիրը. արդէօք ազերիներ կը պապհպանեն զայն, թէ ի սպառ կ'ոչնչացնեն՝ պարզապէս իր ունեցած պատմական անցեալին համար:

Գրականություն

- Basler Mission (ed.), *Magazin für die neueste Geschichte der Evangelischen Missions- und Bibelgesellschaften*, Basel 1822; 1826; 1828; 1829; 1836:
- Schuschi. *Arbeit der deutschen Missionarien dasselbst*, in: Basler Mission (ed.), *Magazin für die neueste Geschichte der Evangelischen Missions- und Bibelgesellschaften*, Basel 1825 (1825a):
- Die *Missionsversuche unserer evangelischen Missionsgesellschaft*, in der *Ländern diesseits und jenseits des kaukasischen Gebirges*, in: Basler Mission (ed.), *Magazin für die neueste Geschichte der Evangelischen Missions- und Bibelgesellschaften*, Basel 1825 (1825b):
- Ehret, Josef, *Die Anfänge der Basler Mission in Russland 1820-1825*, in: *Basler Zeitschrift für Geschichte und Altertumskunde*, 50 (1951), 113–145:
- Gazer, Hacik Rafi, *Studien zum kirchlichen Schulwesen der Armenier im Kaukasus*, Teil I: 19. Jh., Berlin 2012:
- Gross, Andreas, *Missionare und Kolonisten. Die Basler und Hermannsbürger Mission in Georgien am Beispiel der Kolonie Katharinenfeld, 1818–1870*, Hamburg 1998:
- Haigis, Peter / Hummel, Gert, *Schwäbische Spuren im Kaukasus. Auswandererschicksale*, Metzingen 2002:
- Hohenacker, Rudolf Friedrich, *Bericht über den Bau des neuen Missions-Hauses zu Schuschi im Jahre 1825*, *Basler Missionsarchiv (BMA)*, FC-2,2, 1826, Nr. 3, 6:
- Կարապետյան, Բ., *Շուշի բերդաքաղաքը (պատմությունը մինչև 1920 թ.)*, Երևան 2000:
- Katterfeld, Anna, Felician von Zarembo. *Ein Christuszeuge im Kaukasus*, Basel 1939:
- Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838–1913, Թիֆլիզ, 1914:
- Manoukian, Abel, *Zeugen der Menschlichkeit. Der humanitäre Einsatz der Schweiz während des Völkermordes an den Armeniern im Osmanischen Reich 1894–1923*, Bern 2012:
- Մանուկեան, Աբէլ, Պազելի անտարանական քարոզչական ընկերությունը և հայերը (1823–1835)/*Die Basler Missionsgesellschaft und die Armenier (1823–1835)*, in: *Das armenische Kulturerbe in Berg-Karabakh/Arzach und die Deutschen*, Göttingen 2021, 81–113:
- Օրմանեան, Մաղաքիա արք., *Ազգապատում, հատոր Գ.*, Երուսաղէմ 1927:
- Pagel, Arno, *Licht im Osten: Zeugen Jesu Christi in Russland*, Marburg 1990:
- Schlatter, Wilhelm, *Die Geschichte der Basler Mission 1815–1915. Mit besonderer Berücksichtigung der ungedruckten Quellen*, *Die Heimatgeschichte der Basler Mission*, I, Basel 1916:
- Waldburger, Andreas, *Missionare und Moslems. Die Baslermission in Persien 1833–1837*, Basel 1984:

Հեղինակ

Աբել Չ. Մանուկեան, Ածբն. գիտ. դոկտ.

Զուիցերիոյ Աւետարանական-բարեկարգեալ եկեղեցւոյ զիտաշխատող և Զուիցերիոյ կրօններու խորհուրդի գլխաւոր քարտուղար, info@ratderreligionen.ch

Open Access

This paper is published under the Creative Commons Attribution–ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.